

1.3. **Գներ և սակագներ**

**Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2004թ. հունվար-նոյեմբերին**

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	102.5	99.5	100.3	99.8	98.5	101.0
Փետրվար	99.4	108.6	97.9	100.4	101.0	99.5
Մարտ	100.3	101.9	102.4	107.7	97.2	101.1
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.7	99.8	99.5
Մայիս	101.1	102.1	99.9	98.7	99.6	102.2
Հունիս	99.9	103.8	99.96	99.5	88.5	100.9
Հուլիս	97.5	96.7	99.0	97.3	90.6	103.3
Օգոստոս	97.6	101.2	99.7	97.4	80.1	101.6
Սեպտեմբեր	99.3	99.3	99.9	99.3	101.5	97.1
Հոկտեմբեր	100.1	102.5	100.2	98.6	99.0	92.8
Նոյեմբեր	100.8	105.8	100.3	99.6	100.4	101.9
Նոյեմբերը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ	99.7	118.3	99.4	97.6	97.6*	103.2*
2004թ. հունվար-նոյեմբերը 2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	107.4	121.4	101.4	99.5	108.4	107.1

\* ) 2004թ. նոյեմբերի և 2003թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողովնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏԵՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

**Գների, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. հունվար-նոյեմբերին**

(նախորդ տարվա հունվար-նոյեմբերի նկատմամբ, %)




**Սպառողական գներ.** 2004թ. հոկտեմբեր-նոյեմբերին հանրապետության սպառողական շուկայում արձանագրվել է 0.9% ընդհանուր գնաճ, ընդ որում, նոյեմբերին գնաճը կազմել է 0.8%, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

2004թ. հունվար-նոյեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.05%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 0.3% հավելաճի դիմաց:

**Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. նոյեմբերին**

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



2004թ. նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.7%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 103.3%-ի դիմաց:


**Սպառողական գների փոփոխությունները 2004թ. նոյեմբերին**

(%)

	2004թ.				հունվար-նոյեմբեր 2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	99.7	100.8	104.8	109.3	107.4
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	99.3	101.1	106.7	112.6	110.6
ոչ պարենային ապրանքների	99.9	100.2	100.4	102.6	100.6
ծառայությունների	100.8	100.3	101.5	103.4	101.6


**ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-նոյեմբերին**

(նախորդ ամսվա համեմատ, %)



**Արտարժույթային շուկա:** 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության սպառողական շուկայում գրանցված 0.8% հավելաճը ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.7% նվազումով: Նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների և հաշվարկային փոխարժեքի նվազումը կազմել է համապատասխանաբար 0.3% և 11.1%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 3.3% գնաճը ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 3.5% նվազումով: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2004թ. նոյեմբերին կազմել է 502.71 դրամ, ինչը 10.9% ցածր է 2003թ. նոյեմբերի համապատասխան ցուցանիշից (564.39 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2003-2004թթ. հունվար-նոյեմբերին**  
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



**Պարենային ապրանքների գներ:** 2004թ. հոկտեմբեր-նոյեմբերին պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.5% ընդհանուր գնաճ, ընդ որում, նոյեմբերին գնաճը կազմել է 1.2%, ինչը մեծապես պայմանավորվել է ձկնամթերքի, մրգի, բանջարեղենի գնաճով:

**Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

(%)


	2004թ.			հունվար-նոյեմբերը 2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			
	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	101.1	106.7	112.6	110.6
<i>այդ թվում՝</i>				
<b>Պարենային ապրանքներ</b>	101.2	107.7	114.0	111.6
հացամթերք	99.1	104.9	126.2	122.7
մսամթերք	98.5	113.2	119.8	113.5
ձկնամթերք	125.6	192.3	162.8	114.3
կաթնամթերք	102.5	108.6	105.1	106.2
ծուլ	102.5	115.8	121.7	116.7
կենդանական և բուսական յուղ	100.5	101.5	109.3	106.5
միրգ	112.3	136.5	123.4	113.9
բանջարեղեն և կարտոֆիլ	103.7	89.4	78.8	94.7
չաքարավազ	99.8	100.4	99.0	96.4
սուրճ, թեյ, կակաո	100.1	100.2	100.9	101.2
հրուշակեղեն	100.2	105.4	107.0	102.6
այլ մթերքներ	100.2	103.1	101.5	101.2
ոչ ոգելից խմիչք	99.9	105.9	109.3	104.9
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.0	98.7	100.7	101.4

2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ձկնամթերքի 25.6% գնաճ, ինչը հիմնականում թարմ և ապխտած «սիգ» տեսակի ձկան համապատասխանաբար 27.3% և 26.7% գնաճի արդյունք է: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում գրանցվել է ձկնամթերքի 10.1-75.7% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Մարտունիում): Մայրաքաղաքում ձկնամթերքի գնաճը կազմել է 23.7%:

Մրգի ապրանքախմբում 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 12.3% գնաճ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է մրգի 1.9-17.3% գնաճ, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Հրազդանում (Չարենցավանում): Մայրաքաղաքում մրգի գնաճը կազմել է 12.8%:

Մրգի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար- նոյեմբերին


(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է 3.7% գնաճ, ինչը կանաչ պղպեղի (2.2 անգամ), վարունգի (2 անգամ), լոլիկի (1.9 անգամ), սմբուկի (1.9 անգամ), կանաչ լոբու (68.9%), սխտորի (14.8%), գլուխ սոխի (12.4%) գնաճի արդյունք է: Կարտոֆիլի գինը նշված ժամանակահատվածում նվազել է 8.0%: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 0.9-10.1% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վանաձորում), իսկ Թալին, Դիլիջան և Եղեգնաձոր քաղաքներում՝ 3.9-0.3% գնանկում:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-նոյեմբերին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 1.5% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է խոզի (3.0%) և տավարի (2.2%) մսի գնանկումով: Ոչխարի մսի գինը նշված ժամանակահատվածում աճել է 2.8%: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում գրանցվել է մսամթերքի 0.1-2.3% գնանկում (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում), իսկ մյուս 3 քաղաքներում՝ 0.1-1.5% գնաճ:

2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում գրանցվել է գների հարաբերականորեն կայուն մակարդակ, ընդ որում, ոգելից խմիչքի գներն աճել են 0.1%, իսկ ծխախոտի գները նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2004թ. նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.1% գնանկում:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**

(%)

	2004թ.			
	նոյեմբեր			հունվար-նոյեմբեր 2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Ոչ պարենային ապրանքներ այդ թվում.</b>	100.2	100.4	102.6	100.6
հագուստ և կտորեղեն	99.8	97.9	99.8	98.7
վառելիք	101.2	105.2	129.4	107.1
կահույք	99.4	92.6	91.4	95.2
գորգեղեն	100.1	99.4	102.6	99.7
տեքստիլեղեն	99.9	101.5	99.1	99.3
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.7	96.6	92.2	97.2
խոհանոցային սպասք	99.8	97.8	99.6	99.1
լվացամիջոցներ	100.1	101.3	102.4	101.2
շինանյութեր	99.8	98.3	97.2	99.2
այգեգործական ապրանքներ	100.4	103.4	108.2	105.7
դեղամիջոցներ	99.9	101.0	93.0	99.1
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	102.8	114.8	124.8	109.8
մշակույթի ապրանքներ	99.4	91.5	88.8	94.7
գրեմական պիտույքներ	100.4	101.4	101.2	100.8
գեղահարդարման ապրանքներ	99.9	100.8	101.8	101.0
ոսկերչական ապրանքներ	100.6	102.2	122.9	105.4
անձնապիտո ապրանքներ	99.8	98.2	97.7	98.5

2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 1.4% և 16.4% գնաճ: Նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար 14.9% և 26.2%:

**Ծառայությունների սակագներ:** 2004թ. նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ ծառայությունների ոլորտում գրանցվել է սակագների 0.8% հավելաճ, ինչը 0.6 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (1.4%):

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

(%)

	2004 թ.			
	նոյեմբերը			հունվար-նոյեմբերը 2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Ծառայություններ, ընդամենը</b>	100.3	101.5	103.4	101.6
<i>այդ թվում.</i>				
Կենցաղային	100.0	97.7	97.0	98.3
բնակարանային-կոմունալ	100.0	103.2	103.2	102.4
բուժսպասարկման	100.0	98.3	98.9	99.2
տրանսպորտի	100.7	99.3	104.8	101.7
կապի	101.8	102.5	108.3	101.3
մշակույթի	103.5	113.7	142.3	128.8
կրթության համակարգի	100.7	102.2	102.7	99.5
հանգստի կազմակերպման	96.5	100.0	100.4	102.4
հանրային սննդի	99.9	108.2	112.5	105.8
իրավական և բանկային	100.0	100.2	100.0	100.1

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է սպառողական գների 0.1-1.5% հավելած (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Մարտունիում): Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.7%:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2004թ. նոյեմբերի 30-ի դրությամբ**

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, միջինը</b>	1365	1289	1610	661	555	255	107	201	77	305
<i>այդ թվում.</i>										
Երևան	1367	1283	1614	663	562	256	108	197	78	304
Գյումրի	1350	1317	1620	661	563	264	104	214	96	344
Վանաձոր	1380	1270	1525	616	539	245	107	229	78	308
Վաղարշապատ	1400	1220	1550	620	570	244	110	172	60	280
Թալին	1400	1350	1617	750	550	255	100	217	100	300
Դիլիջան	1350	1202	1600	650	550	261	100	250	70	350
Հրազդան, Չարենցավան	1410	1385	1700	650	515	250	112	200	80	230
Եղեգնաձոր	1400	1300	1650	650	550	250	100	200	100	200
Մարտունի	1300	1300	1600	700	550	250	90	200	60	350
Կապան	1260	1300	1620	680	520	264	114	210	68	360
Արտաշատ	1300	1236	1600	628	479	250	120	175	120	325

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6425 դրամ (ամենացածր ցուցանիշը գրանցվել է ք. Վաղարշապատում՝ 6226 դրամ, իսկ ամենաբարձրը՝ ք. Թալինում՝ 6639 դրամ), ինչը 4.9% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2003թ. նոյեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (6127 դրամ):

2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված 8 քաղաքներում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-1.1% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ արձանագրվել է ք. Եղեգնաձորում), իսկ Կապան և Հրազդան (Չարենցա-

վան) քաղաքներում՝ համապատասխանաբար 0.7% և 0.1% գնանկում: Ք. Երևանում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.2%:

2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետության դիտարկված 8 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.1-1.3% հավելաճ, իսկ Գյումրի և Եղեգնաձոր քաղաքներում՝ համապատասխանաբար 0.7% և 0.2% նվազում:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2004թ. նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի**

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝					ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			ծառայությունների	
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների		
<b>ՀՀ, ընդամենը</b>	99.7	99.4	99.4	98.6	99.9	100.8	
<i>այդ թվում.</i>							
Երևան	99.2	99.1	99.1	98.3	99.3	99.7	
Գյումրի	100.8	100.3	100.7	98.9	99.2	102.8	
Վանաձոր	101.5	101.0	101.3	96.6	101.9	104.1	
Վաղարշապատ	99.5	99.0	98.3	99.7	101.5	101.9	
Թալին	100.0	98.8	98.1	102.1	100.6	105.6	
Դիլիջան	99.8	99.8	100.1	98.4	99.2	99.8	
Հրազդան, Չարենցավան	99.9	99.5	99.5	96.4	101.0	101.6	
Եղեգնաձոր	99.2	98.7	97.5	101.2	102.5	101.8	
Մարտունի	101.5	101.5	101.7	103.5	99.8	101.3	
Կապան	99.7	99.1	98.8	96.5	101.3	102.7	

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2004թ. Արտաշատ<sup>1</sup> քաղաքում**

*(ճախորդ ամսվա նկատմամբ, %)*

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				
		սպառողական ապրանքների	դրանցից՝			ծառայությունների
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
Մարտ	100.4	100.2	100.3	100.0	99.9	101.1
Ապրիլ	102.1	102.1	102.6	100.3	101.1	102.0
Մայիս	101.9	102.2	103.0	100.4	100.0	100.6
Հունիս	99.5	99.4	99.1	98.4	100.9	100.1
Հուլիս	97.7	97.4	97.0	95.0	99.7	99.2
Օգոստոս	97.9	97.4	96.6	99.0	99.8	99.9
Սեպտեմբեր	100.2	100.2	100.0	100.6	100.9	100.0
Հոկտեմբեր	99.4 <sup>◇</sup>	99.3	99.0	100.0	100.2	99.7 <sup>◇</sup>
Նոյեմբեր	100.7	100.9	101.2	99.4	100.4	100.0

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը:** 2004թ. նոյեմբերին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 18.3% գնաճ, ինչը 2.9 տոկոսային կետով ցածր է ճախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (21.2%):

<sup>1</sup> Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում) գների դիտարկումը կատարվում է 2004թ. փետրվարից սկսած:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի (%)

	2004թ.			
	նոյեմբերը			հունվար-նոյեմբերը 2003թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
<b>Ամբողջ արդյունաբերությունը</b>	105.8	121.8	149.0	121.4
<i>այդ թվում</i>				
էլեկտրաէներգետիկա	98.2	96.0	97.4	99.1
գունավոր մետալուրգիա	118.0	177.0	323.7	174.6
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.2	101.7	129.9	101.0
մեքենաշինություն	105.5	108.3	104.6	85.4
այլ արդյունաբերական արտադրություն(ոսկերչական արդյունաբերություն)	100.7	136.2	118.1	139.1
անտառային, փայտամշակման, թղթի-ցեյլուոզի արդյունաբերություն	101.2	100.0	94.5	95.8
շինանյութերի արդյունաբերություն	98.6	96.4	105.4	84.8
թեթև արդյունաբերություն	103.6	87.8	100.2	81.4
սննդի (ներառյալ այլուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն	99.7	102.2	122.6	115.8
պղիզգրաֆիական արդյունաբերություն	99.3	98.4	103.0	122.6

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը:** 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բեռնափոխադրումների սակագների 0.4% նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է օդային, երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 1.0%, 0.8 և 0.7% նվազումով: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում աճել են 5.6%:

2004թ. նոյեմբերին 2003թ. նոյեմբերի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 98.8%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 90.3%, ավտոմոբիլայինով՝ 107.9%, օդայինով՝ 90.9%, խողովակաշարային տրանսպորտով՝ 107.8%, իսկ հունվար-նոյեմբերին 2003թ. հունվար-նոյեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 99.5%, 92.9, 103.7, 89.9 և 107.6%:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը:** 2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման 0.4% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է մթերող կազմակերպություններին և շուկայում իրացված գյուղատնտեսական մթերքի համապատասխանաբար 1.5% և 3.2% գնաճով:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ԶԳ-ում 1999-2004թթ. նոյեմբերին**


(դրամ)

	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Ցորեն	կգ	98	97	94	80	127	107
Գարի	- ,, -	71	76	74	76	99	98
Լոբի	- ,, -	322	369	422	369	386	393
Կարտոֆիլ	- ,, -	82	81	96	121	92	75
Կաղամբ	- ,, -	27	45	30	43	39	36
Գազար	- ,, -	44	70	47	49	89	60
Գլուխ սոխ	- ,, -	55	124	94	77	150	150
Խնձոր	- ,, -	101	96	113	128	143	163
Տանձ	- ,, -	98	111	116	131	127	205



	Չափի միավորը	1999	2000	2001	2002	2003	2004
Խաղող	- „,-	157	127	153	188	207	190
Մեղր	- „,-	2419	2529	2706	2477	2421	2562
Միս տավարի	- „,-	824	675	824	849	935	1026
ոչխարի	- „,-	763	694	799	859	898	1014
խոզի	- „,-	861	891	1011	877	1033	1470
Կաթ	լ	123	113	119	114	115	107
Պանիր (յուղոտ)	կգ	861	841	825	755	797	887
Մածուն	- „,-	177	174	187	175	180	184
Չուլ	հատ	49	44	44	46	46	47
Միամյա խոտեր	կգ	20	26	21	22	28	23
Բազմամյա խոտեր	- „,-	25	27	23	30	31	31

Գյուղմթերքի իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում  
 2004թ. նոյեմբերին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի  
 (նախորդ ամսվա նկատմամբ, %)



Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

	2004թ.			հունվար-նոյեմբերը 2003թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			
	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	
<b>ՀՀ, ընդամենը</b>	100.4	101.3	97.6	108.4
այդ թվում՝				
Արագածոտն	99.6	106.1	101.8	105.2
Արարատ	103.8	104.8	100.5	113.1
Արմավիր	112.5	102.4	95.2	114.0
Գեղարքունիք	101.7	102.4	102.6	97.3
Լոռի	95.1	98.9	99.6	111.1
Կոտայք	98.6	91.9	87.7	106.0
Շիրակ	99.3	99.1	87.6	107.9
Սյունիք	97.8	97.5	95.8	103.2
Վայոց ձոր	101.6	109.8	113.3	104.0
Տավուշ	99.9	118.1	114.9	117.8

2004թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 1.9% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է էներգիայի և քսայուղերի (3.5%) գնման գնաճով և վճարովի ծառայությունների սակագների (5.9%) հավելաճով: Անասնակերի գնման գները նշված ժամանակահատվածում աճել են 1.4%, իսկ պարարտանյութերի, մեքենասարքավորումների և պահեստամասերի, սերմացուների և տնկիների, գյուղատնտեսական մանր գործիքների, շինանյութերի, անասունների ապրանքախմբերում գրանցվել է 25.7-1.2% գնման գնանկում:

## Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

	2004թ.			
	նոյեմբերը			հունվար- նոյեմբերը 2003թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ
	2004թ. հոկտեմբերի նկատմամբ	2003թ. նոյեմբերի նկատմամբ	2003թ. դեկտեմբերի նկատմամբ	
<b>ՀՀ, ընդամենը</b>	101.9	101.5	103.2	107.1
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	104.0	113.4	115.4	108.6
Արարատ	97.4	112.5	106.9	109.5
Արմավիր	100.4	107.8	104.5	109.3
Գեղարքունիք	101.9	105.9	95.9	108.7
Լոռի	99.7	105.1	122.5	107.8
Կոտայք	99.2	100.8	102.9	99.2
Շիրակ	101.2	97.6	101.5	110.4
Սյունիք	92.9	105.3	113.3	104.0
Վայոց ձոր	98.2	102.9	109.4	108.6
Տավուշ	105.5	105.1	106.8	107.8